Ո՞Վ ԿԴԱՌՆԱ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ

ԳԱԱ փոխնախագահը Ֆադեյ Տաճատիշին հորդորել է հրաժարական տալ

Հունվարի 25-ին Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստի ժամանակ շափազանց տհաճ դեպք է արձանագրվել:

Այն բանից հետո, երբ ակադեմիայի հումանիտար բաժանմունքի ղեկավար, փոխնախագահ Վլադիմիր Բարխուդարյանը խնդրել է գիտության ոլորտում բարեփոխումների հայեցակարգի քննարկման համար ընդհանուր ժողով հրավիրել՝ ԳԱԱ նախագահ Ֆադեյ Սարգսյանը կոպիտ արտահայտություններից ու գոռգոռոցից հետո, դուրս գալով դահլիճից, մոտեցել է ԳԱԱ նախագահության մի խումբ անդամների եւ սկսել է նրանց բարձրաձայն վիրավորել ու հայհոյել: Ըստ ակադեմիկոս, ԳԱԱ Ֆունդամենտալ գրադարանի տնօրեն Հանրի Ներսիսյանի, չբավարարվելով փողոցային արտահայտություններով ու սեռական բնույթի հայհոյանքներով՝ ակադեմիայի նախագահը սկսել է հայհոյանքները կրկնել ավելի արտահայտիչ բառերով՝ ռուսերեն, եւ հայտնել է, որ իր հայհոյանքները փոխանցեն նախագահության մյուս անդամներին: Երեկ ակադեմիայի նախագահությունը ստացել է հետեւյալ գրությունը, որտեղ ակադեմիկոս Հանրի Ներսիսյանը պահանջում է. «Մոտակա նախագահության նիստում օրակարգի առաջին (ավելի ճիշտ կլինի՝ միակ) կետ համարվի Ֆ.Սարգսյանի վարքի քննարկումը: Առաջարկվի, որ այս գիտության տաճարում բազմած խուլիգանը անմիջապես ստորագրի հրաժարական»:

Հետաքրքիր է, որ այս անգամ Հանրի Ներսիսյանը միակ բարձրաձայն դժգոհողը չէ: Բանն այն է, որ ակադեմիկոսներն արդեն հոգնել են Ֆադեյ Սարգսյանի մշտական աղմուկ-աղաղակներից եւ յուրաքանչյուր անգամ որեւէ պահանջ ներկայացնելուց հետո Ֆադեյ Տաճատիշի բարձրացրած հիստերիայից: Պարզվում է՝ նախագահության նախորդ նիստի ժամանակ էլ ԳԱԱ 82-ամյա նախագահը հերթական տհաճ միջադեպի ժամանակ, ըստ Հանրի Ներսիսյանի, հարձակվել է մի խումբ գիտնականների վրա՝ բռունցքները թափահարելով, բազմաթիվ անգամներ նրանց անվանելով «ապուշներ» եւ «հիմարներ»: «Տասներկու տարին էլ բավական չէր, որպեսզի գեներալ-մայոր Ֆադեյ Սարգսյանը հասկանա, որ գործ ունի երկրի լավագույն գիտնականների, վերին աստիճանի քաղաքակիրթ մարդկանց հետ: Այլկերպ ինչպե՞ս բացատրել, որ նման հիստերիկ եւ կոպտագույն վարքը նրա համար սովորություն է: Հենց մենք, ԳԱԱ անդամներս ենք մեղավոր, որ համակերպվում ենք այսպիսի սանձարձակ վարքի հետ նույնիսկ պաշտոնական միջոցառումների ժամանակ, փոխանակ չափը կորցրած պաշտոնյային տեղը դնենք»,- գրել է Ֆունդամենտալ գրադարանի տնօրենը ԳԱԱ նախագահությանը դեռ հոկտեմբերին՝ կրկին առաջարկելով լուծել Ֆադեյ Սարգսյանի վաղուց հասունացած հարցը: Հիշեցնենք, որ մինչ այդ էլ նույն ակադեմիկոսը փաստերով բարձրաձայն խոսում էր ակադեմիայում Ֆադեյ Սարգսյանի թույլ տված ֆինանսական խոշոր չարաշահումների մասին, որոնք, սակայն, այդպես էլ անհետեւանք մնացին: Այս անգամ, սակայն, ԳԱԱ անդամների համբերության բաժակը կարծես թե լցվել է: Երեկ մեզ հետ ունեցած զրույցի ժամանակ ԳԱԱ փոխնախագահ Վլադիմիր Բարխուդարյանն ասում էր, որ ինքն անձամբ է Ֆադեյ Սարգսյանին հորդորել հրաժարական տալ: «Բոլոր դեպքերում, կարծում ենք, որ նա պետք է թողնի պրեզիդենտությունը: Տեսնենք, ինչպես կլինի»,- ասում էր պարոն Բարխուդարյանը: Նրա կարծիքով, Ֆադեյ Սարգսյանի պաշտոնանկության հարցը ձգձգվում է, քանի որ վերեւներում չեն կողմնորոշվում, թե ում «դարձնեն» ԳԱԱ նախագահ: Այս պահին քննարկվում է ԳԱԱ նախագահի 2 թեկնածություն. Պետհամալսարանի արդեն նախկին ռեկտոր Ռադիկ Մարտիրոսյանի եւ ճարտարագիտական համալսարանի ռեկտոր Յուրի Սարգսյանի թեկնածությունը: Անձամբ Ֆադեյ Սարգսյանը, ըստ մեր ունեցած տեղեկությունների, փորձելու է ամեն ինչ անել, որ ԳԱԱ նախագահ դառնա Յուրի Սարգսյանը: Ակադեմիկոսների մեծ մասը, սակայն, կարծես թե նախընտրում են համալսարանի նախկին ռեկտորին: Երեկ մեզ հետ ունեցած զրույցի ժամանակ պարոն Բարխուդարյանն ասում էր, որ ակադեմիայում պարբերաբար մոտենում են իրեն եւ ասում, որ Ռադիկ Մարտիրոսյանը լավ կազմակերպիչ է, լավ գիտի համակարգը, եւ լավ կլինի, որ նա դառնա ԳԱԱ նախագահ: Ամեն դեպքում, սակայն, ուժը թերեւս Յուրի Սարգսյանի կողմն է, եւ նա կարծես թե ավելի մեծ շանսեր ունի ակադեմիայի նախագահ դառնալու համար: Մնում է միայն, որ Ֆադեյ Սարգսյանը համաձայնվի հրաժարականի դիմում տալ, ինչը կարծես թե սարերի հետեւում չէ: Բանն այն է, որ բացի Ֆադեյ Սարգսյանի վարքի պատճառով ԳԱԱ անդամների մոտ առաջացած դժգոհություններից, կա եւս մեկ հանգամանք, որ կարող է մեծ աղմուկի պատճառ դառնալ գիտնականների շրջանում: Խոսքը Օրգանական քիմիայի եւ Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի միավորման մասին է, որի գործընթացներն արդեն սկսվել են: ԳԱԱ անդամները գտնում են, որ այս 2 ինստիտուտների միավորումն աբսուրդ է, քանի որ դրանք լրիվ տարբեր գործունեությամբ են զբաղված: Ի դեպ, հունվարի 25-ին տեղի ունեցած ԳԱԱ նիստի ժամանակ Ֆադեյ Տաճատիշի ցասումը սկսվել է հատկապես այս ինստիտուտների պատճառով, երբ նա հայտարարել է, որ նախագահության հետ քննարկել է միավորման հարցը: Բայց այն բանից հետո, երբ ԳԱԱ նախագահության անդամները պնդել են, որ նման քննարկում տեղի չի ունեցել, 82-ամյա ԳԱԱ նախագահն ընկել է հերթական հիստերիայի մեջ՝ հասկանալով, որ բռնվել է սխալ խոսելու մեջ: Այնպես որ, Ֆադեյ Տաճատիշի օրերը ԳԱԱ նախագահի պաշտոնում կարծես թե հաշվված են, եթե, իհարկե, ԳԱԱ անդամներն այս անգամ իսկապես վճռական լինեն:

ԼՈՒՍԻՆԵ ԲԱՐՍԵՂՅԱՆ